



1889

ԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՐԴՈՒԹԵԱՆ  
Ա.ՏԱՐԱԿՈՒԹՅԻՑ ՁԻ ՅՈՒ

ԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ամօ՛ր, յաւիտենական ամօ՛ր Հայե-  
րին... Կիսազազան սեւամորք  
սորոկը նիմնեց իւր անկախ  
« Լիբէրիա » պետութիւնը, Եւ  
դարերու հայածուած ջնուղը  
փողի ուժով իրեն սեպհակա-  
նութիւն դարձուց Պայեստինի  
2/5 մասը. իսկ անհոգ Հայերը  
իրենց հարազատ դրախտ-Հա-  
պատանի մէջ մէկ բիզ անկախ  
սորշ չունին... .

323.1(47.)

Փ-8

ՀԱՅԵՐԻ ՏՈՎԱՆՈՒՄ ՎՐԱՅԻ ԱՆՎԵՐԻ  
Marseille.— Imp. Schickler et Pignatel, r. Vacou, 50

1869

40049-ահ.

լազ

243

Վ.ԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

47

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ՀԱՐՅ. ՈՎ պիտի աղասէ Հայաս-  
տանի օտարների ձեռքէն :

ՊԱՏԱՍԽԱՆ. Ինքը Հայ ազգը պի-  
տի աղասէ Հայաստանը օտարների  
ձեռքէն :

Հ. Ի՞նչ հնարներով:

Պ. Հնարները զմնաղան են, սա-  
յելով հանգամանքին.—Երբեմն սեպ-  
հական զէնքով, երբեմն փողով և եր-  
բեմն օտարի օգնութեամբ :

Հ. Միթէ կարող է Հայաստանը  
երբեւից Հայերի սեպհականութիւնը  
դառնալ:

Պ. Այս՝ կարող է, և անշուշտ կը  
դառնայ նա Հայերի սեպհականու-  
թիւն, եթէ բոլոր Հայերը՝ այը և կին



243-2002 (23339-60)  
243-242

Հարուստ և աղքատ , ծեր և պատանի ,  
այնպէս բաղձան և ձգտին Հայաս-  
տանի ազատութեան , ինչպէս քաղ-  
ցածը ձգում է հային և ծարաւածը  
ջրին :

Հ. Ո՞ր երկիրը կոչվում է Հայաս-  
տան :

Պ. Հայաստան կոչվում է այն եր-  
կիրը , որն չըտպատում է Սեւան ,  
Վան և Արմիա ծովակները , իսկ ա-  
մենը միասին Մասիս լեռները :

Հ. Ո՞վ է Հայի թշնամին և ո՞վ է  
նորա բարեկամը :

Պ. Հայի թշնամին նա է , որ աշ-  
խատում է Հայերին հեռացնել Հա-  
յաստանէն . իսկ նորա բարեկամը նա  
է , որ դիւրացնում է նոցա կամ ի-  
րենց աշխարհը վերադառնալու , կամ  
իւր աշխարհի մէջ հաստատուն մնալու :

Հ. Ո՞վ է իսկական Հայը :

Պ. Իսկական Հայը նա է , որ ան-  
կեղծ կըզնայ և կը նպաստէ Հայաս-

տանի անկախութեան . մնացեալները  
առմեալքաներ են , այսինքն՝ ո՞չ միայն  
անպիտան Հայեր , այլ և անպիտան  
մարդեր :

Հ. Ո՞ր աշխարհի մէջ Հայը կարող  
է երջանիկ լինել :

Պ. Հայը երջանիկ լինել կարող է  
միայն Հայաստանի մէջ . վասն զի նա  
ամեն տեղ հալածուած և արհամարհ-  
ուած պանդուխտ է , և միայն Հա-  
յաստանի մէջ նա պատուաւոր մարդ-  
է մարդկութեան աշքում :

Հ. Հայերը Հայաստանէն դուրս  
որի՞ն են նմանում :

Պ. Հայերը Հայաստանէն դուրս  
նմանում են . օտարի տուն վարձողի ,  
որն աշխատում է զարդարել ա՛յն  
տան պատերը , որից վաղ կամ ուշ  
դուրս պիտի ձգէ նորան օրինաւոր  
տանուտէրը :

Հ. Ի՞նչ վիճակի կը հանդիպին Հա-  
յերը , եթէ Հայաստանը չազատեն :

Պ. Եթէ Հայերը Հայաստանը չա-  
զատեն՝ նոքա շատ շուտ (գուցէ յի-  
տուն տարիէն) բնաջինջ կը լինին աշ-  
խարհիս երեսէն :

Հ. Միթէ հարստութիւնը չօդնիլ  
Հայերին պահպանելու օտարութեան  
մէջ :

Պ. Օտարութեան մէջ աղքատու-  
թիւնը անշուշտ կը մաշէ Հայերին .  
բայց աւելի շուտ կը մաշէ հարստու-  
թիւնը :

Հ. Ի՞նչ զանազանութիւն կայ հր-  
պատակի և սարուկի մէջ : Հայերը օ-  
տար պետութիւնների հպատակ են,  
թէ սարուկ :

Պ. Հպատակ նշանակում է իր աղ-  
քային կառավարութեան և նորա օ-  
րէնքներին կանաւոր հնազանդող .  
ստրուկ նշանակում է օտար պետու-  
թեան և նորա օրէնքներին ակամայ ,  
բռնի և կամ յիմարաբար հնազանդող :  
Հայերը ամեն օտար պետութիւնների

ստրուկ են, վասն զի նոցա օրէնքների  
յօրինելուն անմասն են եղել, և ամեն  
տեղ Հայի դաւանած կրօնը ընկնծուած  
է և նորա աղքային ծէսերը հալած-  
ուած և արհամարհուած են :

Հ. Առանց վտանգի ի՞նչ ազգասի-  
րական գործեր կարող է կատարել  
ամեն մի Հայ մարդ :

Պ. Իւր անձը վտանգի չենթարկե-  
լով, ամեն մի Հայ մարդ կարող է և  
պարտաւոր է այս գործերը կատարել.

1) Հայերէն լեզուն պահպանել իւր  
լնտանիքի մէջ և իւր աղքակիցների  
հետ խօսակցութեան մէջ . 2) Հայ ոգ-  
ով դաստիարակել զաւակացը . 3) Առ-

փորեցնել նոցա զէնքի գործածութիւ-  
նը . 4) Զամուսնանալ օտարի հետ .

5) Կարելի եղածին չափ աշխատիլ  
Հայաստանի մէջ ունենալու մեծ կամ  
փոքր հողային կալուածք . 6) «Հայոց  
Հայրենասիրական Միութեան» ուեւէ  
մի օգնութիւն հասցունել ուղղակի

կամ անուղղակի ինչ միջոցով որ այդ  
յարմար կը լինի իւր գտնուած գրու-  
թեան մէջ :

Հ. Որո՞նք են հայկական առա-  
քինութիւնները :

Պ. Ամենագլխաւոր հայկական ա-  
ռաքինութիւնն է իւր ստացուածքն  
ու արիւնը նուիրել Հայաստանի ազ-  
տութեան Ա. Գործին . 2) Իւր բոլոր  
ոյժը թափել յորդորելով իւր ծանօթ  
կարող Հայերին որ երթան դէպի Հա-  
յաստան . 3) Համոզել և օդնել Հայե-  
րին իրենց սեպհական անշարժ կալ-  
ուածք և հող ունենալու Հայաստանի  
մէջ . 4) Օդնել այն Հայերին որոնք  
Հայ ազգի օդտին համար կաշխատին  
Հայաստանի մէջ :

Հ. Որո՞նք են հայկական մոլու-  
թիւնները :

Պ. Ամենագլխաւոր և ազգակոր-  
ծան հայկական մոլութիւնն է աշ-  
խարհաքաղաքացիութիւնն . 2) Պան-

դխտութիւն . 3) Անձնական շահի  
համար պէս պէս խարդախութիւն-  
ներ , որով կոտրվում է Հայ ազգի  
անունը . 4) Եահասիրական ազգասի-  
րութիւն (կեզծ ազգասիրութիւն) . 5)  
Հայ մեծաւորների գէմ ըմբոստութիւն  
(գաւաճանութիւն , մատնութիւն ) և  
6) Օտարի հետ ամսւանութիւն :

Հ. Ի՞նչ խօսքեր Հայոց լեզուէն  
դուբու պիտի ձգել :

Պ. Հայոց լեզուէն առ միշտ պէտք  
է գուրս ձգել վհատեցուցիչ , յաւսա-  
հատական , ազգի վարկը ստորացնող ,  
խորամանկութիւն (խարէական աչք-  
բացութիւն) սերմանող խօսքերը , ա-  
ռածները , խրամները և խորհուրդ-  
ները . ինչպէս , « Հայը թակէ Վար-  
դանին , Թուրքը թակէ Վարդանին » .  
« Ուտեղ Հայ , այնտեղ վայ » . « Է՛լի  
Հայութիւն արի՞ր » ( այսինքն դարձ-  
եալ ամենավատթար գործ գործե-  
ցի՞ր) . « Հաստն ու բարակ է մէկ գին ,  
վայ է բարակ մանողին » և լն. :

Հ. Առաւօտ ու գիշեր ի՞նչ աղօթք  
պիտի անէ Հայը :

Պ. Հայը քնէն զարթելիս , կամ  
քուն մտնելիս , միայն այս աղօթքը  
պիտի կարդայ . «Ո՞վ բարեգութ Աստ-  
ուած , օգնէ՛ ինձ Հայաստանը աղա-  
տելու » : Դորանից աւելի ոչ մի ուրիշ  
աղօթք հարկաւոր չէ՛ Հային :

Հ. Հայ պատանիների համալսարան  
մտնելը կը նպաստէ՛ հայկական նպա-  
տակներին :

Պ. Սյժմ Հայ պատանիների հա-  
մալսարան մտնելը վերաբերմամբ Հայոց  
նպատակներին նոյն նշանակութիւնն  
ունի , ինչ նշանակութիւն որ կունե-  
նար աւազակի հէնց վրագ յարձակուած  
րոպէին կամենայիր սուրի և զէնքի  
գործարաններ շինելու : Այս մասին  
Հայերը առ սակաւը հարիւր տարի ու-  
շացել են : Միւս կողմանէ 40-50 ամեայ  
փորձը ցոյց տուաւ , որ համալսարան-  
ների տուած արդիւնքը հայ պատա-

նիներին դոքա էին . 1) Դիւրին միջոց  
ապահով ապրուստ ճարելու և աս-  
պարէզ շինելու և 2) անզգալի կերպով  
սառչելու իւր ազգէն և հոգւով օ-  
տարանալու նորա շահերէն : Իսկ ե-  
թէ կան մի քանի իսկապէս արժանա-  
ւոր հայ համալսարանականներ , պէտք  
է կարծել որ նոքա առանց համալր-  
սարան մտնելու եւս ազգի պիտանի  
անդամները կը լինէին , ինչպէս որ կան  
ազգին մէջ շատ նշանաւոր մարդիկ ,  
որոնք երբէք համալսարան եղած չեն :  
Պէտք է ի նկատի ունենալ և այն հան-  
դամանքը , որ այժմեայ համալսա-  
րանները և նոյն իսկ գիտութիւնը  
գարձել են բռնակալների ձեռքումն  
ազգեր ստրկացնելու հզօր գործիք :

Հ. Գալոց ազգատուած Հայաստանի  
մէջ աղնուականութիւն և այլ առանձ-  
նաշնորհուած դասակարգեր պիտի լի-  
նի՞ն թէ ոչ :

Պ. Քաղաքացիական հաւասարու-

թիւն պիտի լինի Հայաստանի ժողովրդին մէջ։ Բայց ի հարկէ մի մասնաւոր պատիւ կամ նշանակութիւն կը ստանան նոքա կամ նոցա ժառանդաները որոնք առաջինը կը բարձրացունեն սուբը Հայաստանի ազատութեան համար և կամ կը զբաւուին կեանքերէն արեան դաշտի մէջ։ Ազատ Հայաստանի մէջ կազմուելիք Ազգային ժողովը պարտաւոր կը լինի իւր յարմար դատած միջոցներով մասնաւոր պատիւներ տալ կամ օդնութիւններ անել այդպիսիներին և կամ նոցա անխնամ թողած ժառանդներին։ Հայրենիքը չի մոռանայ իւր ազատութեան համար զոհ եղողներին։

Հ. Ո՞րն է Հայերի նշանաբանը։

Պ. Հայերի նշանաբանը այս երեք բառն է. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՄԱՆ։

Հ. Հայաստանը կարժէ այդքան մեծամեծ զոհերի։

Պ. Այո՛, Հայաստանը կարժէ ա-

մենամեծ զոհերի, վասն զի նորա մէջ կեցողի կեանքի տեւողութիւնը միջին թուով է 73 տարի։ Հայաստանի հողը մշակողին տալիս է մէկ ցանած սերմ-նահատի փոխարէն 45-60 սերմնահատ։ Հայաստանի մէջ վազած ազրիւների կէսը հանքային բժշկաբար ջրեր ունին։ Հայաստանի գիրքը միջնաշխարհային է, այսինքն Սփիայի և Եւրոպայի սահմանագլուխներումն։ Հայաստանի ժողովուրդը եթէ չըլինի ազգերի մէջ ամենազօրը, գէթ նա կը լինի ամենահարուսար և ամենաբաղդաւորը։ Հայաստանը հարուստ է եւ կենդանիներով, եւ բոյսերով եւ հանքերով։

Հ. Ի՞նչ պատճառով Հայոց անկախութիւնը չորս անդամ կորաւ։

Պ. Հայերի անկախութեան չորս անդամ կորչելու պատճառները միեւնայն էին. նախ՝ Հայաստանի հողը պատկանում էր 3-400 մեծամեծների (նախարարների) և ո՛չ թէ իւր միլիո-

նաւոր ժողովրդին, և Երկրորդ՝ Հայերի խելքը չփորեց ազգային դրահան օրէնքներ յօրինելու։ Հայոց ազգը չունէր ո՛չ սեպհական հող և ո՛չ օրէնք։ Նորա դրացի տէրութիւններին շատ դիւրին էր ընկճել մի ազգ, որ զրկուած էր եւ իրաւունքէ եւ սեպհականութենէ. իսկ Հայ ազգի համար օտարների լուծը ոչնչով աւելի ծանր և դառն չէր, քան թէ համազգի նախարարների լուծը։

Հ. Ո՞րը աւելի արեան և փողի զոհ է պահանջում Հայերից — թշնամիի հետ պատերած զմը, թէ այժմեայ խաղաղ ստրկական վիճակը։

Պ. Այն ստոր, արտասուելի, անդունելի վիճակը, ուր կան այժմ Հայերը, աւելի արեան և փողի (նիւթական) զոհ է պահանջում Հայերից, քան թէ դէմ առ դէմ պատերազմը սինլքոր Թաթարների, Քուրդերի և Զէրքէղների հետ. տարին տարենա-

կան հաղարաւոր Հայեր են մորթվում և միջօնների փող և ապրանք են կողոպտվում, յափշտակվում, գուցացվում, փչացվում անպաշտպան, փոքրողի Հայերից։

Հ. Ո՞վ պիտի բարձրացնէ ազատութեան դրօշակը և սուրը։

Պ. Դրօշակը պիտի բարձրացնէ հայ վարդապետը. իսկ սուրը բոլոր հայ պատանեկութիւնը, երիտասարդութիւնը և տղամարդիկ, 16 տարեկանից բռնած մինչեւ 45 տարեկանը։

Հ. Ի՞նչ փողով ձեռք պիտի բերուին զէնք, պարէն, զգեստ և այլ ուազմամժերք։

Պ. Ժողովրդէն մաս մաս հաւաքուած փողերով։ Այն ժողովուրդը որ եր վրայ բռնացող և իրեն թշուառացունող տէրութեանը պահպանելու համար բոլոր ծախսերը կանէ իր վճարած տուրքերով, կարող է և պարտաւոր է անել իր սեպհական հայրենիւ

(23339-60)

(48/3)

243-2002

քի աղատութեան համար ծախսերն  
եւս . այս պէտք է իմանայ ամեն Հայ  
և նորա համեմատ ուրախութեամբ և  
ինքնայօժար վճարէ իւր ազգային  
պարտքը : Բացի այդ , այն հայրենա-  
սէր հարուստ Հայեր որ այժմէն մե-  
ծագումար փողեր նուիրելով կօդնեն  
Հայաստանի աղատութեան գործին ,  
կը նշանակուին « Հայոց Հայրենասի-  
րական Միութեան » կողմէն և կը  
ներկայացուին ապագայ աղատուած  
Հայաստանի Ազգային ժողովին որ կո-  
րող է իւր արժան համարած փոխա-  
րինութիւններն անելնոցա , վաճառե-  
լով Հայաստանի մէջ Թիւրքերին ու-  
նեցած պետական բոլոր անշարժ կալ-  
ուածներն որոց ապօրինի կերպով տի-  
րապետած են այժմ այդ բարբարոս  
օտարազգիներ և պէտք է Հայի սեպ-  
հականութիւն դառնան :

Հ. Ո՞վ պիտի ընտրուի Հայաստանի  
կառավարիչ :

Պ. Հայաստանի կառավարիչ կընտ-  
րուի նա որին զինուորեալ Հայ գունդը  
կը ճանաչէ ամենաքաջը , ամենախո-  
հեմը և ամենազնիւր և որ կարծա-  
նանայ Հայաստանի ժողովրդէն ընտ-  
րուած Ազգային ժողովի մեծամաս-  
նութեան քուեին :

Հ. Ի՞նչ է նշանակում յաղթել և  
ի՞նչ յաղթուիլ :

Պ. Յաղթել նշանակում է թշնա-  
միի առջեւ անվախ գնալ և մեռնելէ  
չը սարսափիւ . յաղթուիլ նշանակում  
է պատերազմի դաշտումը սրտի մէջ  
երկիւղ տածել : Անվախը (քաջը) վախ-  
կոտին միշտ կը յաղթէ :

Հ. Հայի ազգային յատկանիշները  
որո՞նք պիտի լինին :

Պ. Հայի ազգային յատկանիշները  
պիտի լինին Հայոց լեզուն և Հայաս-  
տանը աղատուած տեսնելու փափագը :

Հ. Ո՞րն է Հայ ազգի կրօնը :

Պ. Հայ ազգի կրօնն է հաստատուն

հաւատը թէ «ՀԱՅՈՍՏԱՆԻ ՊԻՏԻ Ա-  
ԶՈՏՈՒԻ ՕՏԱՐԻ ԼԾԵՆ»։ Ով այս բանին  
հաւատում է, նա է ուղղափառ չա-  
յագաւանը։

Հ. Ապա ի՞նչ են նշանակում լու-  
սաւորչադաւան, պազարաւան կամ  
կաթոլիկ և լսւտերական կոչումները։

Պ. Դոքա մարդկային կրքերի և  
տղիտութեան ստեղծած և այժմ հը-  
նացած գաղափարներն են որոնք մե-  
ծապէս վնասեցին և այժմ եւս վնա-  
սում են չայ ազգին։

Հ. Ճշմարի՞տ է որ ասում են թէ՝  
ազգը ստրկութենէ ազատելու համար  
մեծամեծ վտանգների ենթարկուել  
և ահագին փողեր պիտի վատնել։

Պ. Այո՛, շատ ճիշտ է։ Եթէ ա-  
զատողք երկու երեք հոգի լինին,  
վտանգը շատ մեծ է և կորուսող ան-  
խուսափելի, զոհերն ել մարդկային  
ուժէն վեր։ բայց եթէ ամբողջ ազգը  
մասնակցէ, այն ժամանակ եւ վտանգը

եւ զոհողութիւնը այն աստիճան կը  
թեթեւանան, որ ամեն մի անհատին  
գրեթէ անզգալի կերեւին։

Հ. Ով պիտի միաւորէ չայերին  
այդ մեծ գործի համար։

Պ. Ընդհանուր վտանգը մօտալուտ  
կորսունին։ Դորա համար ամեն մի չայի  
վրայ սուրբ պարտք կայ միմեանց  
պատմելու, հասկացնելու, որ եթէ  
նոքա վաղօրօք չաղատեն չայաստանը,  
օտար ազգերը բնաջինջ կանեն չայոց  
լեզուն և չայաստանեայց եկեղեցին,  
և այնուհետեւ չայը ինքն ըստ ինքեան  
կանհետանայ աշխարհիս երեսէն։ այն  
ժամանակ ամեն գերդաստանի հայր  
կիմանայ, որ լաւ է նորա մի որդին  
ծառայէ իւր ազգին, քան թէ իւր  
ամբողջ ընտանիքը ոչ անառ և լաւ  
է իւր հարստութեան մի վոքքիլ մասը  
ընծայուի իւր ազգի օքանից, իւր թէ  
իւր բոլոր գանձը օտարի սեպհակա-  
նութիւնը դառնայ։

Հ. Ի՞նչ են նշանակում այն գեղեցիկ արտօնութիւնները, որն ժամանակից ժամանակի առաջ ձեռքով չնորհում են օտար պետութիւնները Հայոց աղքին:

Պ. Այն արտօնութիւնները, որ օտար պետութիւնները չնորհում են Հայերին, նման են թակարդի մէջ դրած այն համով կերին, որով երեխայք բռնում են միամիտ թռչուններին: Այդպիսի արտօնութիւններով ամայացաւ Հայաստանը իւր բնիկ ժողովրդէն և պարզամիտ Հայերը հասանայս օրուայ ցաւալի թշուառ վիճակին:

Հ. Հայերի ոտքի ելնելը (Տաճկի բռնութեան դէմ) իրաւացլո՞ գործէ, թէ ապօրինի:

Պ. Հայերի ոտքի ելնելը Հայաստանի աղատութեան համար իրաւացի գործ է թէ քրիստոնէական և թէ քաղաքական օրինաց կողմանէ, և աշխարհիս երեսի ամեն լուսաւորեալ

և աղնիւ մարդոց գովասանքը կը շարժէ:

Հ. Ուրեմն Հայերը իրաւունք ունի՞ն զէնքի զօրութիւնով աղատել իրենց հայրենիքը:

Պ. Հայերը Հայաստանը զէնքի զօրութիւնով աղատելու համար ոչ միայն ունին իրաւունք, այլ և ամեն մի Հայի վրայ սուրբ պարտք կայ այդ սիրալի գործը կատարելու, ինչպէս որ ամեն հարազատ օրդի լիակատար իրաւունք ունի իւր հօր և նախորդների ժառանգութիւնը ստանալու և մեծ յանցանքէ իւր օրդւոց և յետնորդների առջե, եթէ նա այդ ժառանգութենէն հրաժարուի կամ կամաւ, կամ յիմարութեամբ և կամ փոքրոդութեամբ:

Հ. Ուր կերթան հոգիները այն մարդոց, որոնք կը մեռնին ճակատի մէջ:

Պ. Աւետարանի խօսքերի հիմանց վրայ՝ ճակատի (աղքային պատերազ-

մի) մէջ մեռնողի հոգին, ի շարս սրբոց,  
անշուշտ կերթայ երէնից արքայու-  
թիւն, վասն զի այդպիսին կեանքէն  
զրկուելէ ի սէր և ի պաշտպանութիւն  
իւր նեղեալ մերձաւորներին. նորա  
անունը կը լինի նահատակ և նորա  
յիշատակը սուրբ եկեղեցին կը տօնէ  
մինչեւ աշխարհի կատարածը:

Հ. Հրացանի ամե՞ն գնդակը դիպ-  
չում է և ամե՞ն խոցուածը մեռնումէ:

Պ. Վիճակագրական ամենաճիշդ-  
հաշիւներէն երեւում է, որ հրացանի  
տասը հազար գնդակէն մինն է դիպ-  
չում մարդուս և 38 խոցուածներէն  
մինն է միայն մեռնում:

Հ. Պատերազմի դաշտում խոցուած  
հոգեվարը չի տանջվում:

Պ. Ամենափորձառու բժիշկները  
հաստատում են, որ կակուդ անկողնի  
մէջ մեռնելը հազարապատիկ աւելի  
դժուար է, քան թէ պատերազմի  
դաշտում. իսկ զէնքի պատճառած

մահը ամենաթեթեւն է մահերի մէջ :

Հ. Հնար կայ պատերազմի դաշ-  
տում մահից ազատուելու :

Պ. Այս', կայ և մի հատիկ հնարին  
է այս եթէ չես ուզում որ թշնամին  
քեզ սպանէ, դու ինքդ շտապէն նո-  
րան սպանելու : Ուր վտանգը շատ  
մեծ է և անխուսափելի, համարձակ  
վտզէն նորա առջեւ և վտահ եղիր  
որ վտանգը ինքը կը փախչի քեզա-  
նից : Այս փորձած երեւոյթ է : Թը շ-  
նամիի առջեւ փախչելը երկու վատ  
հետեւանք ունի . մէկ որ՝ փախչողը  
անպատճառ կոպանուի, և երկրորդ՝  
նա ակներեւ կորուստի կը մատնէ իւր  
հաւատարիմ զինակից ընկերին :

Հ. Հայի կալուածական հարսառու-  
թիւնը օտար աշխարհի մէջ ի՞նչ է :

Պ. Հայի կալուածական հարսառու-  
թիւնը օտար աշխարհի մէջ սորկի ա-  
ներեւոյթ, բայց ամրապինդ շղթայ է,

որով կաշկանդուած են նորա ձեռները  
և ստները :

Հ. Ի՞նչ են այն պատուանուները,  
տիտղոսները, աստիճանները, պատ-  
ուանշանները և վկայաթղթերը, որ  
ունին Հայերը օտար պետութեանց  
մէջ :

Պ. Այն պատուանուները, տիտ-  
ղոսները, աստիճանները, պատուա-  
նշանները և վկայաթղթերը, որ ըս-  
տացել են Հայերը օտար պետու-  
թիւններէ՝ ստրկութեան գլխադիր-  
ներ են ի տրիտուր իրենց կողքը ած  
ազատութեան և հայրենիքի ուրա-  
ցութեան :

Հ. Ե՞րբ օտարազգիք կը դադա-  
րին, ինչպէս որ այժմ, արհամարհե-  
լէ, ատելէ և հալածելէ Հայերին և  
Ե՞րբ կ'ակսին հակառակ դորա յարգել  
նոյա :

Պ. Երբ Հայերը ազատեն իրենց  
հայրենիքը օտարի լծէն. բայց այդ

շեղած, նոքա մինչեւ իրենց բնաջինջ  
լինելը կրմնան արհամարհուած, ա-  
տած, անուանարկ, հալածուած և  
գարշելի արարածներ օտարի աչքում,  
աւելի ստոր քան թէ ջհուդները, ցի-  
կանները և փարիաները :

Հ. Հայերը Ե՞րբ ստքի բարձրանան :

Պ. Երբ որ մեծամեծ ազգերի մէջ  
սկսուի կենաց և մահու պատերազմը :

Հ. Իսկ մինչեւ այն ժամանակ ի՞նչ  
պիտի անեն Հայերը :

Պ. Այս Վարդապետարանը իմաս-  
տասիրելով նորա բովանդակութիւնը  
սրբութեամբ կատարեն և ոյժ տան  
«Հայոց Հայրենասիրական Միութեան»:



ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻԶՈՑԵՐ

( Քաղուած Կանոնագրեն )

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգումներ մայունելու Թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ : Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքինքնը կառավարելու որով միայն պիտի կրնան վելնալ այն հարստահարութիւններ որոնք այսօր Հայտստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին :

«Հայոց Հայրենասիրական Միութեան»ը իւր նպատակ իրագործելու համար իւր կարողութեան չափով կը դորձագրէ ամեն յարմար եղած միացներն, ժամանակի պահանջներին համեմատ կաշխատի ներքին ոյժ գո-

յայունել Աղջին մէջ իւր աղատու.  
թեան համար , հրատարակութիւննել  
կանէ, դիմումներ կանէ որպց որ պէտք  
է և նիւթափէս ու բարոյալէս կը<sup>1</sup>  
քաջալերէ անոնց որոնք անձնութրու.  
թեամբ կաշխատին հայրենիքի աղա.  
տութեամն գործին :

Միութիւնը կունենայ իրեն բերան  
եղող լրագիր որ, բացի զանազան լու-  
րեր տալէ իրբեւ լրագիր , կը հաղոր-  
դէ ընդհանրութեան ինչ որ Միու-  
թիւնը ուզէ հաղորդել , տեղեկու-  
թիւններ կուտայ Հայաստանի և տա-  
րաբնակ Հայերի գրութեան վրայ և  
կը ծառայէ Հայրենասիրական եռան-  
դը արծարծելու Հայերին մէջ : \*

Ծանօթ . «Հայոց Հայրենասիրական Մի-  
ութ անդամակցիլ կամ թղթակցիլ  
ուզողներն պէտք է դիմեն հետեւեալ  
հասցէին .

M. Portoukalian  
(FRANCE)

Marseille

\* «Հայոց Հայրենասիրական Միու-  
թիւնը կը նպաստէ Արմենիա լրագրի  
հրատարակման :

ՀՀ Ազգային գրադարան



NL0585314

